



ԳԵՂԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՃՀ օդային տրանսպորտի շահագործման և
կառավարման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՈՐՊԵՍ ՕՂԱԳՆԱՑԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Հայաստանի օդային փոխադրատրամի վիճակի վերլուծությունը հանգեցնում է օդընկերությունների սեփականության և կառավարման ոլորտում փոփոխությունների անհրաժեշտության գիտակցմանը: Հոդվածն ամփոփում է Հայաստանի տնտեսության օդային փոխադրումների ճյուղի ձեռնարկությունների ամենաարդյունավետ սեփականության ձևի որոնման հիմնահարցի լուծմանը նվիրված ուսումնասիրության արդյունքները: Վերլուծվել են բաժնետիրական ընկերությունների հատկությունները, համեմատվել են դրանց բաց և փակ տարբերակները: Համեմատական վերլուծության եղանակով գտնվել է օդընկերությունների ամենաարդյունավետ սեփականատիրության ձևը: Հետևություն է արվել, որ օդընկերության ամենաարդյունավետ կազմակերպչիրավական ձևը բաց բաժնետիրական ընկերությունն է, որը նաև ամենաարդյունավետ սեփականատիրական հարաբերություններն է ապահովում հավաքական սեփականության ձևի միջոցով:

Հիմնաբառեր. օդընկերություն, բաժնետիրություն, հավաքական սեփականություն, խմբակային կառավարում, արդյունավետություն

«Օդային Հայաստան» օդընկերությունը Հայաստանի փոխադրող է, նաև հայկական փոխադրող, բայց ոչ ազգային փոխադրող, որովհետև տնտեսագիտությունում ընկերության ազգային լինելը նշանակում է պետական սեփականությամբ ընկերություն լինել: Լրագրողները սխալմամբ «Արմավիա» օդընկերությունն էլ էին ազգային անվանում, որը նույնպես պետական չէր: Պետական, ազգային էր միայն «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ն: Սակայն,

չնայած իր պետական, ազգային կարգավիճակին, այն, փոխանակ ավելի լավ կառավարվելու, արհեստականորեն սնանկացվեց և վերացավ իր հզոր ինքնաթիռային շարժակազմի հետ միասին: Մինչդեռ շարժակազմի հենց այդ հզորության շնորհիվ Հայաստանը միշտ առաջատար դիրքեր էր գրավում խորհրդային հանրապետությունների փոխադրական տնտեսական գործունեությունը ներկայացնող վիճակագրական աղյուսակներում: Օդընկերությունը սնանկացավ կառավարման կատարելագործման համար խոշոր միջոցների ծախսման պատճառով: Այսպես՝ կառավարիչների խորհրդատուներ էին վարձվում արտասահմանից, միջազգային հեղինակավոր կազմակերպություններին գործարար ծրագրեր էին պատվիրվում, օդանավային շարժակազմի նորացման և օդընկերության տեխնիկական վերազինման ծրագրեր էին կազմվում: Սակայն այդ ամենը և այլ թանկարժեք միջոցառումներ չփրկեցին, իսկ գուցե նաև նպաստեցին ընկերության սնանկացմանը: Այնինչ, թանկարժեք կառավարման փոխարեն ընդամենը սրտացավ և հոգատար վերաբերմունք էր պետք: Իսկ հանրության շրջանում արհեստականորեն տպավորություն ստեղծվեց, թե մեղավորը պետական կառավարման համակարգն է: Հայաստանի հաջորդ օդային փոխադրողն արդեն մասնավոր «Արմավիա ավիաընկերություն» ՍՊԸ-ն էր: Սակայն մասնավոր լինելու թվացյալ առավելությունն էլ վերջինիս չփրկեց սնանկացումից: Այն նույնպես սնանկացավ, չնայած իր երբեմնի ծաղկուն վիճակին և մեծ շարժակազմին: Այժմ դրան հաջորդել է նույնպես մասնավոր մեկ այլ օդընկերություն՝ ՓԲԸ «Օդային Հայաստան», օտար լեզվով՝ Air Armenia, որը երկու անհատի սեփականություն է: Ի դեպ, այն նույնպես միակ հայկական օդընկերությունն է: Այսինքն՝ Հայաստանին չի փրկում նույնիսկ «Արմավիայի» սնանկացումից հետո՝ 2013 թվականին շուկայի ազատականացման մասին ընդունված որոշումը, քանի որ Հայաստանում ինչպես միշտ եղել է միայն մեկ օդընկերություն, այնպես էլ շարունակում է լինել միայն մեկը: Եվ, ցավոք, ընդամենը մեկ տարվա գործունեության ընթացքում արդեն ի հայտ են գալիս սնանկացման նախանշաններ, որոնցից են՝ օդաչուների և աշխատակիցների աշխատավարձերի հաճախակի ուշացումները, «Զվարթնոց» օդակայանին մշտական պարտքերի պատճառով չվերթերի պարբերաբար ուշացումները, պարտքերի կուտակումները ռուսական օդային փոխադրատորմին, անկայուն փողամիջոցային վիճակը, որի պատճառով վարձատուները հետ պահանջեցին առանց այդ էլ փոքրիկ շարժակազմից իրենց երկու ինքնաթիռները, շարժակազմի պահպանվող փոքրությունը (սկզբում 1, հետո 2, ապա 3, հիմա 1 ինքնաթիռ), փոխադրումների շուկայում փոքր մասնաբաժինը, փոխադրական գործունեության իբր ժամանակավոր դադարեցումը և այլն: Փաստորեն, ձեռնարկության մասնավոր լինելը դեռևս տնտեսական արդյունավետ գործունեության երաշխիք չէ. ինչպես պետական սեփականության, այնպես էլ մասնավորի դեպքում է հնարավոր սնանկացումը: Իսկ եթե մեզ մոտ շահավետ ձեռնարկատիրությամբ՝ օդային փոխադրումներով զբաղվող մասնավոր օդընկերությունները սնանկանում են, ապա դա սեփականատիրական հարաբերությունների շուկայական բարեփոխումների անարդյունավետության վկայությունն է:

Այս տեսակետից Հայաստանի օդազնացության բնագավառի համար հրատապ են ձեռնարկատիրական գործունեության ամենարդյունավետ ձևի որոնումներին նվիրված ուսումնասիրությունները: Հարկ է վեր հանել սնանկացման տանող խորքային, հիմնական, գլխավոր պատճառները և ցույց տալ դրանց վերացման ուղիները: Արդիական կլինեն նաև կառավարման և

տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը նվիրված հետազոտություններն ու առաջարկությունները:

Հետխորհրդային Հայաստանի երեք օդընկերությունների կարճատև գործունեության հանգամանքը կարծես տպավորություն է ստեղծում, թե դրանց նույն անտեսանելի ձեռքն է առաջնորդել, ինչպես շուկայական տնտեսության անտեսանելի ձեռքի մասին տեսությունում, բայց հակառակ ուղղությամբ՝ բացասական նշանով, որովհետև շուկայի անտեսանելի ձեռքը կարգավորում է շուկայի բնականոն գործունեությունը, իսկ Հայաստանի օդագնացության անտեսանելի ձեռքը ուղղորդում է դեպի սնանկացում: Դա կարող է վկայել նաև ի սկզբանե անբարեխիղճ գործունեության նպատակադրումների մասին, քանի որ օդային ուղևորափոխադրումների շուկայում միշտ վտանգ կա, որ կարող է հայտնվել «...նորեկ, որը կիրառում է «խփելու և փախչելու» ռազմավարությունը: Ենթադրվում է, որ ներուժային մրցակիցը կարող է օգտագործել շահույթ ստանալու ցանկացած, նույնիսկ կարճատև հնարավորությունը, քանի որ նա կարող է մտնել շուկա, շահույթ ստանալ մինչև գների փոփոխությունը, հետո դուրս գալ ճյուղից առանց ծախսերի»¹: Կարող է օգտագործել շուտ հարստանալու ցանկացած հնարավորություն, օրինակ, ըստ գործընկերային պարտականությունների, նախատեսված վճարումների չկատարման հաշվին հարստանալը՝ կուտակելով բազմամիլիոն պարտքեր և դուրս գալով շուկայից՝ առանց դրանք մարելու, որպես արդարացում նշելով իր սնանկությունը:

Սնանկացման տանող պատճառներից կարող են լինել վարչական խոչընդոտները, ոչ մրցունակ կազմակերպական կառուցվածքներ ունենալը, սեփականատիրական հարաբերությունների անկատարությունը և այլն: Օրինակ՝ մի հետազոտության համաձայն, պետական վարչակազմը վճռական դեր ունի ընկերությունների բնականոն գործունեության համար պայմանների ստեղծման գործում: «Մեր ... փորձագիտական գնահատականը թույլ է տալիս հետևություն անել, որ վերլուծվող բնագավառի համար վարչական խոչընդոտների խումբը հարցվածները դիտարկում են որպես առավել նշանակալի մրցակցության սահմանափակման տեսակետից»²:

Միջազգային մի կազմակերպության հետազոտություններից մեկը, նվիրված սեփականության ձևերին և դրանց ազդեցությանը օդագնացային ձեռնարկությունների կառավարման և ռազմավարական զարգացման վրա, ներդրողների առավելություններից նշում է դրանց կենտրոնացումը դրամագլխի (այսինքն՝ ձեռնարկության – Գ.Խ.) կառուցվածքի արդյունավետության վրա³:

Սեփականության ձևը մեծ նշանակություն ունի ձեռնարկության կառավարման համար: Դրանից մեծ չափով կախված է գործունեության արդյունավետության մակարդակը: Եթե Հայաստանում թե՛ պետական և թե՛ մասնավոր ձևերը հանգեցնում են օդընկերությունների սնանկացման, ապա միգուցե ա՞յլ ձև է պետք որոնել: Ե՛վ պետական, և՛ մասնավոր ձևերը միանձնյա կառավարում են ենթադրում, իսկ միանձնյա կառավարման դեպքում մեծ են կաշառակերության վտանգները, փոքր են զարգացման համար ներդրումների հավա-

¹ Лукьянов С., Тиссен Е., Кисляк Н., Рынок авиационных пассажирских перевозок России: квазиконкуренция или...? / Лукьянов С., Тиссен Е. // „Вопросы экономики“, 2007(11), с. 127.

² Նույն տեղում, էջ 122:

³ St u Формы собственности в аэропортах и их влияние на бизнес. Мировая практика. 36-я Московская международная конференция "Формы собственности в аэропортах. Механизмы управления", էջ 1–34: NACO Netherlands airport consultants B.V. www.naco.nl/assets/files/Publications/Presentation 2009.pdf. - 30.09.14, էջ 25:

նականությունները: Ուստի գուցե հարկ է դիմել այլընտրանքային տարբերակի՝ հավաքական սեփականության ձևին, որը նաև հավաքական կառավարում, հսկողություն և պատասխանատվություն է ենթադրում: Հավաքական կառավարման հնարավորություն ընծեռող սեփականության ձև է բաժնետիրական սեփականությունն ընդհանրապես, իսկ դրա մեջ՝ բաց բաժնետիրական ընկերության կազմակերպարավական ձևը: Դեռևս շուկայական հարաբերություններին անցման շրջանում մասնագետները նշում էին, որ «հայկական օդագնացության գլխավոր հիմնախնդիրներից են. ա) ապամենատիրացումը, մրցունակ կազմակերպական կառուցվածքների ստեղծումը, բ) ապապետականացումը կամ մասնավորեցումը, գ) բաժնետիրացումը, ներդրումների ներգրավումը, հիմնական միջոցների նորացումը և համապատասխանեցումը առաջնակարգ միջոցների նմուշներին, դ) մասնավոր հատվածի ստեղծումը և նրա գործունեության ծավալման համար անհրաժեշտ պայմանների ձևավորումը»⁴: Վերոհիշյալ կետերից ներկայումս իրագործված են համարվում ապամենատիրացումը, ապապետականացումը, մասնավոր հատվածի ստեղծումը: Ըստ որում, ապամենատիրացումը ձևական բնույթ է կրում, գոյություն ունի միայն թղթի վրա, որովհետև փաստացի կա միայն մեկ հայկական օդընկերություն, չկան այլընտրանքային տարբերակներ: Թեև օդագնացային իշխանությունները մխիթարում են իրենց նրանով, թե օդային փոխադրումների շուկայում կան այլընտրանքային փոխադրողներ, բայց դրանք օտարերկրյա են: Ճիշտ է, սպառողներն օգտվում են դրանից, բայց Հայաստանի տնտեսությունը՝ ոչ: Սրանց ամբողջ շահույթը հոսում է դուրս: Իսկ եթե հայկական օդընկերություններն ավելի շատ լինեին, ապա շուկայի ավելի մեծ հատվածներ կգրավեին: Բացի այդ, կնվազեր միակ օդընկերության սնանկացումից սպառնացող վտանգը: Հավասար պայմաններում ընթացող մրցակցությունը անաչառ մրցավարի դեր կկատարեր՝ բացահայտելով ներդրումների ներգրավման կատարյալ ձևերը, ամենամրցունակ կազմակերպական կառուցվածքները, բաժնետիրացման ձևերի լավագույն փոխառնությունները և այլն:

Իսկ ապապետականացման կամ մասնավորեցման գործընթաց, որպես այդպիսին, պետությունը չի իրականացրել, բայց «Հայկական ավիաուղիներ» սնանկացած պետական օդընկերությունից հետո ստեղծվող բոլոր ընկերությունները մասնավոր են: Հետևաբար՝ մասնավոր հատվածի ստեղծման և գործունեության ծավալման համար անհրաժեշտ պայմանները կարելի է ձևավորված համարել: Չլուծված են մնացել. 1) մրցունակ կազմակերպական կառուցվածքների ստեղծումը, որոնք կբացառեն սնանկացման հավանականությունը, 2) բաժնետիրացումը, ներդրումների ընդգրկումը, հիմնական միջոցների նորացումը և համապատասխանեցումը առաջնակարգ նմուշներին: Առաջացել է նոր մեծ հիմնախնդիր՝ փոքր օդընկերությունների, նաև տեղական օդային փոխադրումների բացակայությունը մեր երկրում:

Սնանկացումների պատճառ կարող է լինել ձեռնարկությունների միանձնյա կառավարման համակարգը, որի դեպքում դյուրին են դառնում գաղտնի գործարքները, հիմնական և շրջանառու միջոցների վատնումը անձնական նպատակներով կամ ոչ ըստ նշանակության, գաղտնի փայտտիրական համաձայնությունները պետական, դրամատոնային կամ այլ իշխանությունների

⁴ Գ. Խաչատրյան, Շուկայական տնտեսությանը անցման փուլում Հայաստանի քաղաքացիական օդագնացության տնտեսությունը և նրա հիմնախնդիրները // «Գիտություն և տեխնիկա», 2008, N 06(538), էջ 14:

հետ և այլն: Միանձնյա կառավարման թերությունների վերացման գործում կարևոր դեր ունի ձեռնարկության սեփականության ձևը: Հավաքական կառավարման մարմնի գոյությունը օղնկերության կազմակերպական կառուցվածքում կարող է զսպել վերոհիշյալ թերությունների դրսևորումների ուժը և հաճախականությունը: Հայտնի է, որ կառավարմանը մասնակցելու հնարավորություն տալիս է սեփականության իրավունքը: Ձեռնարկության աշխատակիցները, սեփականատերերը թույլ չեն տա իրենց ձեռնարկության սնանկացումը, համենայնդեպս, ամեն ինչ կանեն դա բացառելու համար: Ուստի անհրաժեշտություն կա կատարելագործելու սեփականատիրական հարաբերությունները Հայաստանի քաղաքացիական օդազնացությունում ընդհանրապես և օդային փոխադրատորմում մասնավորապես: Հայտնի է նաև, որ միանձնյա կառավարման համակարգը ժառանգություն է մնացել նախկին խորհրդային վարչահրամայական համակարգից: Դեպի շուկայական տնտեսություն անցման ճանապարհին անվիճելի է սեփականության հարաբերությունների բարելավման անհրաժեշտությունը, քանի որ սեփականության հարաբերություններով են ձեռնարկություններում որոշվում մյուս բոլոր՝ փողային, տնտեսական, արտադրական, հասարակական, կառավարչական հարաբերությունները: Օդազնացային տնտեսական համակարգի զարգացման մակարդակը կփոփոխվի՝ կախված այն բանից, թե սեփականության ինչպիսի ձևեր կգործադրվեն դրա ձեռնարկություններում: Ունեցվածքը հարկավոր է հանձնել այնպիսի սեփականության ձևերի, որոնց միջոցով առավելագույնս կհաղթահարվի աշխատավորների օտարումը կառավարումից և սեփականության տնօրինումից: Միայն սեփականության մոր հարաբերությունների հիման վրա կարելի է լուծել ձեռնարկություններում կուտակման և սպառման լավագույն համամասնությունների պահպանման, փողային ներդրումների արդյունավետության մեծացման, արտադրական կարողությունների աճի հիմնահարցերը: Մասնավորեցման նպատակներից մեկը աշխատավորների պահանջների բավարարմանը սեփականությունը ծառայեցնելն է, նրանց բարեկեցության ապահովումը: Դա հնարավոր է այն դեպքում, եթե սեփականությունը պատկանի հենց իրենց՝ աշխատավորներին: Ոչ պետական փակ և բաց բաժնետիրական ընկերությունների համակարգը այդպիսի հնարավորություն չունի: Ոչ վաղ անցյալում Հայաստանում սեփականաշնորհման փորձից հայտնի է, որ բաժնետիրական ընկերությունների աշխատակազմին տրամադրվում էր ձեռնարկության սեփականության 20 տոկոսը: Իսկ բաժնետիրական ընկերությունների մասին 1996 և 2001 թվականների ՀՀ օրենքները սահմանում են, որ աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի մասը կարող է ընկերության կանոնադրական հիմնադրամի 25 տոկոսը կազմել⁵: Փակ բաժնետիրական ընկերության տարբերակը կարող է արդյունավետ լինել, եթե սեփականության մասնաբաժին ունենան նաև աշխատակիցները, իսկ եթե բաժնետոմսերին տիրեն մեկ, երկու կամ մի քանի անհատներ, ապա անարդյունավետ գործունեության և սնանկացման վտանգները կաճեն:

Ուղևորների օդային փոխադրումների շուկան ցանկացած տնտեսությունում զարգացման յուրօրինակ ցուցչի դեր է կատարում: Այդ ճյուղում ծառայությունների առաջարկի մակարդակով կարելի է դատել ամբողջ տնտեսության գիտատեխնիկական ներուժի, ճյուղում գործող ընկերությունների շուկայական իշխանության մասին: Համաշխարհային օդային փոխադրատոր-

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը բաժնետիրական ընկերությունների մասին, 27 հոկտեմբերի 2001 թ., <http://www.arlis.am/documentview.aspx?docID=69106>. –1.10.14, հոդված 41:

մում պետական կարգավորումը սերտորեն փոխկապված է օդագնացության կառավարման և զարգացման շուկայական հայեցակարգի հետ: Պետությունները գործուն ընկերային քաղաքականություն են իրականացնում, բայց չեն միջամտում արտադրության կազմակերպման և կառավարման գործընթացներին: Նրանք, որպես կանոն, միայն խթանում են ձեռնարկությունների գործունեության ձևը տնտեսական լծակներով, իսկ թռիչքների անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության հարցերում պետության ազդեցությունն ավելի ու ավելի է մեծանում: Պետական սեփականություն կարող է մնալ թռիչքների անվտանգության ապահովման հետ կապված ունեցվածքը, իսկ մասնավոր հատվածի ստեղծման, շուկայի զարգացման անհրաժեշտ պայմաններից է օդակայանների և օդընկերությունների տնտեսական, առևտրային ինքնուրույնությունը: Պետությունը պետք է միայն որոշակի կարգավորիչ միջոցառումներ իրականացնի, որոնք կարտահայտվեն, օրինակ՝ հարկային զեղչերի սահմանմամբ: Ժամանակ առ ժամանակ, երբ հիմնահարցեր են հասունանում, պետությունը, ի դեմս լիազորված մարմնի, կարող է փոխել քաղաքականությունը և ուժեղացնել կամ թուլացնել իր կարգավորիչ դերը: Օրինակ՝ ԱՄՆ-ում օդագնացության ապակարգավորման քաղաքականությունը նպաստեց այդ ճյուղի առաջընթացին. աճեց մրցակցությունը, գները նվազեցին, սպառողները շահեցին, ոչ մրցունակ կազմակերպական ձևերը դուրս մղվեցին շուկայից, մրցունակները զարգացան: Ռուսաստանի տնտեսությունում ներկայումս գերակշռում է բաժնետիրական սեփականության ձևը, սակայն օդագնացության ոլորտում անելիքներ դեռ չատ կան: «Ռուսաստանի փոխադրատորմի ռազմավարությունը մինչև 2020 թ. նախատեսում է միավորված օդագնացային ձեռնարկությունների մասնավորեցման և բաժնետիրացման ավարտ, դրանց միաժամանակյա բաժանումով անկախ տնտեսավարող ենթակառուցվածքի՝ օդընկերությունների և օդակայանների»⁶: Ի տարբերություն Ռուսաստանի՝ մեզ մոտ այդ բաժանումը կատարվել է, այն էլ վաղուց, իսկ բաժնետիրացումը՝ ոչ:

«Շուկայական ռազմավարությունում առաջատար դերը պատկանում է խոշոր ձեռնարկություններին և միավորումներին»⁶, քանի որ նյութական բարիքների հիմնական զանգվածն արտադրվում է հենց դրանց կողմից: Արդի տնտեսությունում վերջիններիս սեփականության ձևերն են բաժնետիրականը և պետականը: «Սեփականության յուրաքանչյուր ձև ունի իր առավել արդյունավետ կիրառության ոլորտները: Պետական սեփականությունը հաջողությամբ գործում է շուկայական շահադրժման սահմանափակ հնարավորություններով ոլորտներում: Բաժնետիրական և հավաքական սեփականությունների կիրառությունը նպատակահարմար է այն դեպքերում, երբ պահանջվում է միջոցների կենտրոնացում: Բաժնետիրական սեփականությունը խմբակային սեփականություն է, որը ստեղծվում է արժեթղթերի թողարկման և իրացման ճանապարհով»⁷: Սակայն մեր ուսումնասիրության շրջանակներում մեզ ավելի հետաքրքրում է հավաքական (կոլեկտիվ) սեփականության ձևը: Հավաքական սեփականությունը հիմնված է անհատական սեփականատե-

⁶ Транспортная стратегия Российской Федерации на период до 2020 года. М., 2005. http://mintrans.ru/documents/detail.php?ELEMENT_ID=13024 . – 1.10.14, с. 47.

⁶ Хупавко Л., Критерии управления экономическими отношениями собственности. „Вестник Челябинского университета“, 2002, № 2(5), с. 82.

⁷ Типы, формы и виды собственности. <http://www.bibliotekar.ru/economicheskaya-teoriya/21.htm> . – 1.10.14, с. 2.

րերի միավորման վրա: Այն ներկայացված է սպառողական գործակցանոցների (կոոպերատիվ), հավաքական տնտեսությունների, բաժնետիրական և գործակցային սեփականության զանազան տեսակներով: «Բաժնետիրական սեփականությունը հավաքական սեփականության տարատեսակ է, որը զուգակցում է ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական սեփականության տարրեր: Բաժնետիրական սեփականությունը շատ իրավաբանական և անհատ անձանց սեփականությունն է, որը ենթադրում է նրանց փողային միջոցների կամավոր միավորում: Բաժնետիրական ընկերության միավորված միջոցների հիման վրա տեղի է ունենում եկամտի հավաքական ստեղծում շահաբաժնի տեսքով դրա հետագա անհատական սեփականացումով»⁸:

Համաշխարհային շուկայում բաժնետիրական սեփականության տարածվածության մասին է վկայում աշխարհի առաջատար շուկայում դրանց դերի գերակշռման մասին վիճակագրությունը: «ԱՄՆ-ում ընկերությունների 10%-ը բաժնետիրական են, 10%-ը՝ ընկերակցություններ, 80%-ը՝ անհատական սեփականությամբ ոչ մեծ ընկերություններ: Ըստ որում, ընկերությունների նշված խմբերից յուրաքանչյուրին բաժին է ընկնում արտադրանքի և ծառայությունների իրացման ընդհանուր ծավալի համապատասխանաբար՝ 80, 13 և 7%-ը»⁹: Բաժնետիրական սեփականության ձևը գործունեության ֆինանսավորման արտաքին աղբյուրներ ներգրավելու և օգտագործելու մեծ հնարավորություններով և դրամագլխի կենտրոնացման առավել արդյունավետ կազմակերպական տնտեսական լծակ է: Դրանով էլ պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում բաժնետիրական ընկերությունների լայն տարածումը և բաժնետիրացման նկատմամբ հետաքրքրության աճը հետխորհրդային երկրներում: Այստեղ «սեփականության իրավունքների վերաբաշխումն ուղղված է նեղ շրջանի ձեռքում տնտեսական իշխանության կենտրոնացման դեմ, այսինքն՝ սեփականությունից, արտադրության կառավարումից, աշխատանքի արդյունքների բաշխմանը մասնակցությունից անմիջական արտադրողների փաստացի և իրավաբանական առանձնացման դեմ, ինչը անխուսափելիորեն կհանգեցնեք հասարակական հակադրության, սեփականությունից աշխատանքի բաժանման, ձեռնարկության աշխատողների շրջանում համապատասխան շահադրժման բացակայության, ինչը, վերջնական արդյունքում, կարտահայտվեք արտադրության արդյունավետության նվազումով»¹⁰:

Սեփականությունը մարդկանց միջև հարաբերություններն են բարիքների (աշխատանքով միջնորդավորված կամ չմիջնորդավորված բնության մթերքների) յուրացման համար: «Քանի որ յուրացման եղանակները փոխվում են դարաշրջանից դարաշրջան, կարելի է ավելի ճշգրիտ սահմանում տալ. սեփականությունը մարդկանց միջև նյութական և հոգևոր բարիքների յուրացման որոշակի պատմական եղանակի հետ կապված հարաբերություններն են: Այլ կերպ ասած՝ սեփականությունը նյութական և հոգևոր բարիքների յուրացման որոշակի պատմական եղանակ է»¹¹: Կարելի է առանձնացնել սե-

⁸ Формы и виды собственности. – Современная экономическая теория. Modern-econ.ru - <http://modern-econ.ru/vvedenie/problemy/typy-sistem/vidy.html> . – 1.10.14, с. 2.

⁹ Характеристика акционерной формы собственности.–Allbest.ru, 12.12.2009.- http://otherreferats.allbest.ru/economy/00037000_0.html .-1.10.14, с. 4.

¹⁰ Хупавко Л., նշվ. հրատ., էջ 84:

¹¹ Формы собственности.- Allbest.ru, 27.10.2010. - http://knowledge.allbest.ru/economy/2c0a65635a2bd68a5c43b88421206c37_0.html .-1.10.14, с. 8.

փականության երկու տեսակ. մասնավոր և պետական (հասարակական), որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի ձև: Ըստ կուտակման բնույթի՝ մասնավոր սեփականությունը ստորաբաժանվում է աշխատանքային և ոչ աշխատանքային: Աշխատանքային սեփականությունը ձևավորվում է աշխատավարձի, ձեռնարկչային գործունեության, բաժնետոմսերի, արժեթղթերի և վարկային հիմնարկություններում ներդրված միջոցներից ստացվող եկամուտների հաշվին: «Բաժնետիրական սեփականությունը մասնավոր սեփականության զարգացման և կերպափոխման գործընթացի օրինաչափ արդյունքն է, երբ որոշակի փուլում արտադրության չափերը, տեխնիկայի մակարդակը, դրամամիջոցների կազմակերպման համակարգը նախադրյալներ են ստեղծում արտադրության կազմակերպման սկզբունքորեն նոր ձևի համար՝ բաժնետերերի կամավոր մասնակցության հիմքով»¹²:

Բաժնետիրական սեփականության ձևը կատարում է երեք գործառնություն. նախ՝ ծառայում է որպես դրամազխի կուտակման և տեղափոխման միջոց, երկրորդ՝ սեփականության ընդարձակմանը և արտադրությունը կառավարող կազմի գործունեության վերահսկմանը բաժնետերերին հաղորդակից դարձնելու միջոց է, երրորդ՝ որպես տնտեսական շահադրժման միջոց է ծառայում, երբ բաժնետերն ու աշխատակիցը միատեղվում են նույն անձի մեջ: Բաժնետիրական ընկերությունները (ԲԸ) մի շարք առավելություններ ունեն սեփականության մյուս ձևերի համեմատությամբ: «Առաջին՝ ընկերությունը հնարավորություն ունի ներգրավելու բաժնետերերի միջոցները՝ համալրելու համար կանոնադրական հիմնադրամը և ընդլայնելու իր գործունեությունը: Երկրորդ՝ ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն առանձնացված է որոշակի կառավարումից, ինչը թույլ է տալիս ընտրել և վարձել առավել հարմար կառավարիչների, տնօրենների, ստիպում է բաժնետերերին լուրջ վերաբերվել կառավարող աշխատակազմի ընտրությանը, քանի որ յուրաքանչյուր բաժնետեր ներդրած միջոցներով է պատասխան տալիս ընկերության արդյունավետ աշխատանքի համար: Երրորդ՝ հնարավորություն է ստեղծվում ձեռնարկության ամբողջ աշխատանքային հավաքականը իրապես դարձնելու սեփականատեր նրանցից յուրաքանչյուրի՝ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման ճանապարհով»¹³: Այս ձևով մասնակցությունը ԲԸ աշխատանքներին շահադրժման կարևոր նախադրյալներից մեկն է: Երբ բաժնետերն ու աշխատողը մեկտեղվում են նույն անձում, վերջինիս մեջ ուղղակի շահագրգռվածություն է առաջանում ձեռնարկության հաջող աշխատանքի առումով: Բաժնետեր աշխատողը շահագրգռված է լինում շահույթն ուղղելու ինչպես դեպի սպառում, այնպես էլ դեպի կուտակում: Հիմնական միջոցների վերականգնում և նորացում ապահովող ներդրումները նպաստում են բաժնետոմսերի արժեքի աճին, հետևաբար՝ բաժնետերերի անձնական ունեցվածքի մեծացմանը: Բացի այդ, արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը և, դրա հետ կապված, շուկայում բաժնետիրական ընկերության դիրքերի բարելավումը նույնպես նպաստում են բաժնետոմսերի արժեքի աճին: Դրան ավելացնենք, որ աշխատողի խնայողությունների ներդրումը բաժնետոմսերի մեջ չի կորցնում իրական արժեքը նաև արժեզրկման պայ-

¹² Акционерные общества. - Allbest.ru, 20.09.2008. - http://knowledge.allbest.ru/economy/3c0b65625b3ac68b5d43b89521216c27_0.html .-1.10.14, с. 1.

¹³ Лукин Л., Шатц И., Преимущества и недостатки акционерной формы собственности. 2009. Электронная библиотечная система АЛТГУ.- new.elib.altstu.ru/diss/conferenc/.../075lukin.pdf .- 1.10.14, с. 4.

մաններում: Մյուս կողմից՝ աշխատող բաժնետերերը վտանգում է իր խնայողությունները, քանզի ձեռնարկության վատ աշխատանքի դեպքում բաժնետոմսի արժեքը կարող է անվանական արժեքից ավելի նվազել, իսկ ձեռնարկության սնանկության դեպքում նա կկորցնի և՛ խնայողությունները, և՛ աշխատանքը: Այդ պատճառով աշխատող բաժնետիրոջ շահագրգռվածությունը բաժնետիրական ընկերության գործունեության վերջնական բարձր արդյունքներում բավականին մեծ է: Ահա թե ինչու խիստ շահեկան է առավելագույն հնարավոր չափով շահագրգռել բաժնետիրացվող ձեռնարկության աշխատանքային հավաքականի անդամների մասնակցությունը բաժնետիրական սեփականությանը: Բաժնետոմսերի բազմաթիվ սեփականատերերի առկայությունը թույլ է տալիս օգտագործել բաժնետոմսերը որպես սեփականության հսկողության և կառավարման գործիք: Ներդրողի բաժնետոմսերը, որոնք, փաստորեն, բաժնետիրական ընկերության մեջ դրամազլխի կամ միջոցների բաժինների ներդրման վկայականներ են, իրավունք են տալիս շահաբաժնի տեսքով շահույթի որոշ մասից օգտվելու և բաժնետիրական ընկերության գործերի կառավարման մեջ մասնակցության, ինչպես նաև լուծարումից հետո մնացող ունեցվածքի մասի տիրապետման: «Բաժնետիրական ընկերության աշխատակիցների և վարչակազմի մասնակցությունը ձեռնարկության գործունեությանը ամեն կերպ խրախուսվում է: Բաժնետիրական ընկերությանը աշխատակիցների անդամակցությունը դիտարկվում է որպես լրացուցիչ շահադրդվածություն, ձեռնարկության աշխատանքի բարձր արդյունավետության մեջ աշխատակիցների շահագրգռություն»¹⁴:

Բաժնետիրական ընկերություններն իրենց առանձնահատկությունների ու առավելությունների շնորհիվ դարձել են ձեռներեցային գործունեության առավել տարածված ձևը: Բաժնետիրական սեփականությունը ներկայումս առևտրային ձեռնարկություններում գերակշռող սեփականության ձև է: «Բաժնետիրական ընկերությունները, որոնք ժամանակակից խոշոր ձեռնարկությունների և կազմակերպությունների հիմնական ձևն են ամբողջ աշխարհում, մասնավոր անձանց, տարբեր տեսակի միավորումների և այլ մարմինների ունեցվածքի միավորման հիման վրա ստեղծված տնտեսության կազմակերպման առավել կատարյալ իրավական համակարգ են»¹⁵: «Բաժնետիրական ընկերությունները հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ օգտագործելու նյութական և մարդկային պաշարները, լավագույնս զուգակցելու հասարակական արտադրության բոլոր մասնակիցների անձնական և հասարակական շահերը»¹⁶: «Բաժնետիրական սեփականության ձևում դրսևորվում է հավաքական և անհատական շահերի առավել խելացի զուգակցումը, այդ պատճառով տնտեսական արդյունավետության չափանիշների տեսակետից այն ավելի հետաքրքիր է, քանի որ, նախևառաջ, անհավասար բաշխված իրավունքներով շատ անհատ և իրավաբանական անձանց յուրացման միասնական գործընթացի սեփականություն է»¹⁷: Ունեցվածքային իրավունքների հետ միասին, հիմնական իրավասությունը, որը բխում է բաժնետոմսերի սեփականության իրավունքից, օրենքի տրամադրած հնարավորությունն է՝ մասնակցելու բաժնետիրական ընկերության կառավարմանը: Բաժնետիրական դրամազլխում մասնակցությունից բխող իրավունքների շրջանակներում

¹⁴ Характеристика акционерной формы собственности, նշվ. աղբյուր, էջ 6:

¹⁵ Лукин Л., Шатц И., նշվ. աշխ., էջ 4:

¹⁶ Акционерные общества, նշվ. աղբյուր, էջ 1:

¹⁷ Хупавко Л., նշվ. աշխ., էջ 83:

սկզբունքային են եկամտի, կառավարմանը մասնակցության, տեղեկություն ստանալու իրավունքները: Սեփականության իրավունքների կենտրոնացման մակարդակը որոշում է բաժնետիրության վերահսկման աստիճանը:

Տնտեսական բնույթով, կազմակերպման և գործունեության եղանակով բաժնետիրական ընկերությունը, ինչպես արդեն նշել ենք, հավաքական սեփականության ձև է: Ձեռնարկությունների բաժնետիրացմամբ տեղի է ունենում սեփականության կերպափոխում միջոցների և պաշարների տեղափոխման ճանապարհով (պետականից՝ մասնավոր), բայց դա կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե ապահովվի արտադրողականության աճ: Սեփականության առարկաների գործունեության տնտեսական արդյունավետության չափանիշը հիմնական կողմնորոշիչն է՝ որոշելու սեփականության կերպափոխման որոշակի ուղիներն ու ձևերը, սեփականության վերաբաշխվող իրավունքները, ինչը կնպաստի դրանց ընկերային և տնտեսական զարգացմանը: Դա կարող է տեղի ունենալ միայն տեխնիկատնտեսական գործընթացում իրական փոփոխությունների, ինչպես նաև սեփականության հարաբերությունների ժողովրդավարացման արդյունքում: «Մենք համարում ենք, որ ներկա փուլում սեփականության կերպափոխումը պետք է ընթանա ժողովրդավարացման ուղով: Սեփականության ժողովրդավարացման առավելությունները բացատրվում են հետևյալով. ժողովրդավարությունը արտադրությունում արդյունավետ աշխատանքի պարտադիր պայման է սեփականաշնորհված ձեռնարկությունների համար, որոնք հիմնված են աշխատակիցների մասնակցության և նրանց ունեցվածքի վրա, ինչը ենթադրում է ձեռնարկություններում տնտեսական իշխանության վերաբաշխում, որի արդյունքում աշխատակիցները պետք է ստանան սեփականության կառավարման մեջ իրական մասնակցության իրավունք, իսկ բարձրագույն կառավարիչները, արտաքին մասնավոր սեփականատերերը և պետությունը՝ լրացուցիչ տնտեսական և հասարակական «շահաբաժիններ»՝ կապված անմիջական արտադրողների աշխատանքի շահադրդման ուժեղացման հետ»¹⁸: Սեփականության իրավունք ունեցողն է ձեռնարկության վերահսկողության և նրա ռազմավարության որոշման իրավունք ունենում: Գոյություն ունի հավաքական կառավարման կառուցվածքի հատուկ տեսակ՝ մասնակցային: «Մասնակցային կառուցվածքի հիմքում սեփականության տիրապետմանը աշխատակիցների մասնակցության, կառավարչական որոշումների ընդունման և ամբողջությամբ ընկերության կառավարման սկզբունքներն են, որոնց շնորհիվ այն արձատապես տարբերվում է ժամանակակից այլ կառուցվածքներից: Ճիշտ կազմակերպված աշխատանքի դեպքում մասնակցությունը կառավարմանը բարելավում է որոշումների որակը, ստեղծագործական մոտեցում է զարգացնում աշխատանքի նկատմամբ, ավելի շատ գաղափարներ է ծնում, հարստացնում է աշխատանքն ամբողջությամբ»¹⁹:

Բաժնետիրական ընկերությունները գործարարության մյուս տեսակի կազմակերպությունների համեմատությամբ այլ առավելություններ ևս ունեն: Այսպես՝ դրանք կարող են գոյության անսահմանափակ ժամկետ ունենալ, այն դեպքում, երբ անհատական սեփականության կամ անհատ անձանց մասնակցությամբ ընկերակցությունների վրա հիմնված ձեռնարկությունների գործողության ժամանակաշրջանը, որպես կանոն, սահմանափակվում է դրանց հիմնադիրների կենսաշրջանով: Բաժնետիրական ընկերությունները բաժնե-

¹⁸ Նույն տեղում, էջ 84:

¹⁹ Копейкина С., Управление производством на воздушном транспорте: курс лекций. Хабаровск: Изд-во ДВГУПС, 2013, с. 26.

տոմսերի թողարկման շնորհիվ լրացուցիչ միջոցների ներգրավման ավելի լայն հնարավորություններ են ստանում: Քանի որ բաժնետոմսերը բավականաչափ բարձր իրացվելիություն ունեն, անհամեմատ ավելի հեշտ է դրանք փողի վերածելը բաժնետիրական ընկերությունից դուրս գալիս, քան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական դրամազխում ունեցած բաժինը հետ ստանալը: Փաստորեն, շահաբաժինների վճարման համար միջոցների ստացման աղբյուր է համարվում բաժնետիրական ընկերության գործունեությունից շահույթը, ուստի դրամազխի կուտակման շահագրգռությունը կապվում է առկա (բաժնետիրական) դրամազխի մեծ արդյունավետությամբ օգտագործման հետ: Բաժնետոմսերի անհրաժեշտ եկամտաբերությունը կարող է ապահովվել միայն բաժնետիրական ընկերության բարձր շահութաբերության պայմանով: Արժեթղթերի շուկայում բաժնետոմսերի արժենշումը որոշվում է ձեռնարկության մրցունակ կարգավիճակով, ներուժային հնարավորություններով, արտադրանքի իրացման շուկաներում դիրքով, զարգացման ռազմավարությամբ: «Բաժնետոմսերի եկամտաբերության կախվածությունը բաժնետիրական դրամազխի շահութաբերությունից բաժնետիրական ընկերության հիմնադիրներից դրա ձևավորման փուլում պահանջում է գործունեության այնպիսի նախագծերի մշակում, այնպիսի գործարար ծրագրեր, որոնք նրա բաժնետոմսերը գրավիչ կդարձնեն զանազան համար»²⁰: Այդպիսով՝ բաժնետոմսերի եկամտաբերությունը որոշում է դրամազխի կուտակման, ներդրումների ստացման հնարավորությունները, որոնք ապահովում են բաժնետիրական ընկերության հետագա զարգացումը, մրցակցային պայքարը շուկաներում, անցումը դեպի ավելի բարդ միավորումային կազմավորումներ: Միաժամանակ, ընկերության զարգացումը պահանջում է շահույթի ներդրում նոր տեխնիկայի մեջ, սարքավորման, շրջանառու միջոցների ձեռքբերում: Ուրեմն՝ ինչպե՞ս զուգակցել բաժնետերերի անձնական շահերը ընկերության շահերի հետ:

«Բաժնետիրության արդյունավետությունը բաժնետերերի մի խմբի համար կորստաբեր շահաբաժինների աճով, մյուսի համար՝ ընկերության կապիտալացման աճով: Հիմնական բաժնետիրական խմբերի շահերի կառուցվածքը ոչ միայն տարատեսակ է, այլև հակասական»²¹: Բաժնետիրական ընկերության գործունեությունից ստացված մաքուր շահույթի բաշխումը հաստատվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում: Այդ հարցը դիտարկելիս բաժնետերերի անձնական շահերի գերիշխումը կարող է արգելակել ընկերության զարգացումը՝ հանգեցնելով լուծարման: Կարևոր է նաև որոշել՝ բաժնետիրական ընկերության գլխավոր նպատակը մեծ շահաբաժնի ստացումն է, իսկ ամբողջ բաժնետիրական դրամազխի բարձր եկամտաբերության հասնելը դիտարկվո՞ւմ է որպես բաժնետոմսերից բարձր եկամուտների ստացման միջոց: Այս հարցը տարբեր կերպ է լուծվել բաժնետիրացման համակարգի զարգացման առանձին փուլերում: Դրա լուծման վրա ազդել են ձեռնարկության չափերը, ներդրողների կազմը, այն հանգամանքը, թե ինչպիսի ժամանակաշրջանում էր ստեղծվում ընկերությունը և այլն: «Համակարգի

²⁰ Նույն տեղում, էջ 6:

²¹ **Каячев Г.**, Эволюция акционерной собственности как основа трансформации содержания корпоративного управления // Международная научно-практическая конференция „Модернизация подготовки управленческих кадров России в контексте мировой системы образования“, сборник материалов [Электронный ресурс]. Красноярск: Сибирский федеральный ун.-т, 2012. Режим доступа:

http://conf.sfu-kras.ru/conf/iubpe1/report?memb_id=4532, свободный. - 1.10.14, с. 4.

ծննդյան և զարգացման առաջին փուլերում թույլ է տրվել բաժնետերերի շահերի առաջնահերթություն: Ներկա պայմաններում համաշխարհային ընկերակցությունում տնտեսական հարաբերությունների բնույթը, բաժնետիրական ընկերությունների միավորումային ձևերը, բաժնետերերի կազմը, արտաքին միջավայրի պայմանները միանգամայն հստակ առաջին հարթություն են մղել միավորումների մրցունակությունը, դրանց բարձր ցուցանիշները բաժնետիրական դրամազլխի եկամտաբերության առումով»²²: Բաժնետոմսերից եկամուտների ապահովումը հնարավոր է դարձել միայն ձեռնարկության մրցունակ գործունեությունից շահույթի ստացման պայմանով, իսկ շահաբաժինների չափը կախված է ընկերության բաժնետիրական դրամազլխի շահութաբերության մակարդակից: «Բաժնետիրացման շահադրդումային տարրի կարևոր բաղադրիչը բաժնետերերի և ընկերության ընդհանուր շահերի զուգակցումն է: Դրան հասնում են այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս մշակել այդ շահերի փոխադարձ կապն ապահովող շահաբաժնային քաղաքականություն»²³: Շահաբաժնային քաղաքականություն մշակելիս հարկավոր է հիմք ընդունել այն դրույթը, որ բաժնետիրական ընկերության գլխավոր նպատակը ձեռնարկության գործունեության եկամտաբերությունն է, շահութաբերությունը, իսկ բաժնետոմսերի եկամտաբերությունը գլխավոր նպատակին հասնելու միջոց է:

Այս առումով հետաքրքրական է, թե աշխատողների բաժնետիրական ընկերությունները, բացի հասարակական արդարության (աշխատանքային գործընթացի յուրաքանչյուր մասնակցին տրվում է աշխատավարձ և տոկոս ընկերության շահույթից՝ ըստ ընդհանուր գործի մեջ աշխատանքի ներդրման) սկզբունքների կիրառումից, կարող են համեմատվել արդյունավետությամբ կամ առաջ անցնել սովորական մասնավոր ընկերություններից: Այս հարցին պատասխանելու համար անցկացվել է «ԺՁ Կոնֆիլ» ՓԲԸ գործունեության տնտեսական ցուցանիշների հետազոտություն՝ հիմնված հաշվեքննիչ ստուգումների հաշվետու տեղեկատվության վերլուծության և տնտեսական ցուցանիշների՝ Ռուսաստանի տնտեսության միջինի հետ համեմատության վրա: «Հետազոտվող ընկերության զուտ ակտիվները միջինը աճել են ավելի արագ, քան եթե դրանք աճեին տնտեսության աճի միջին արագությամբ: Դա նշանակում է, որ հաշվետու պահին «ԺՁ Կոնֆիլ» ՓԲԸ զուտ ակտիվների արժեքը 232 միլիոնով ավելի էր, քան եթե զարգանար երկրում միջին ձեռնարկության արագությամբ: Ուստի կարելի է փաստել «ԺՁ Կոնֆիլ» ՓԲԸ-ի՝ մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ այդ ցուցանիշով գերազանցության մասին»²⁴:

Բաժնետիրական ընկերության արժանիքներն ավելի են թերություններից: Ահա թե ինչու է այս տեսակը ավելի ու ավելի տարածվում ձեռներեցության ոլորտում: Այդ պատճառով «ներկայումս բաժնետիրական սեփականության ձևը գերակշռող է Ռուսաստանում»²⁵:

²² Акционерная форма собственности, преимущества, недостатки и развитие в РК. Алматы 2010. – Allbest.ru, 29.06.2011.

http://knowledge.allbest.ru/economy/3c0b65635a3ac78b4d53a89421216d37_0.html.- 1.10.14, с. 6.

²³ Երկրի տեղում:

²⁴ Сергеев А., Экономическая эффективность акционерных обществ работников на примере ЗАО "НП Конфил". Национальный институт бизнеса. М., 25.11.13.

www.uecs.ru/marketing/item/2555--q-q- - 1.10.14, էջ 6:

²⁵ Лукин Л., Шатц И., նշվ. աշխ., էջ 7:

Ժամանակակից բաժնետիրական ընկերության արդյունավետությունը դրսևորվում է նաև ընկերային ոլորտում. զարգանում է բաժնետիրական սեփականության հասարակական գործառույթը, որն արտահայտվում է խմբակային հարաբերությունների մասնակիցների հակասությունների լուծման մեջ դրա աճող դերով: Հետխորհրդային երկրների տնտեսագետներին թվում էր, թե սեփականության մասնավոր ձևը արդեն երաշխիք է տնտեսական արդյունավետության: Սակայն փորձառությունը ցույց տվեց, որ դա այդպես չէ: «Քսաներորդ դարի 90-ական թվականներին սկզբնապես առաջ քաշված գաղափարը մասնավոր սեփականության անցնելիս արդյունավետ սեփականատիրոջ հայտնվելու մասին հիմնված էր այն բանի վրա, որ տնտեսավարողը, ի դեմս մասնավոր սեփականատիրոջ, անկախ կազմակերպարարական ձևից, ի տարբերություն պետական ձեռնարկության, ձգտում է արդյունավետ արտադրական գործունեության: Սակայն սեփականության վերածննդն առաջնակարգ գործընթացը, ծուլումների և կուլ գնալու գործարքների նշանակալի ծավալը, որոնք հասարակական արդյունք չեն տալիս, հաճախ այդ դրույթը չեն հաստատում»²⁶:

Բաժնետիրական սեփականության արդյունավետության խնդիրը կարող է ներկայացվել սեփականատիրոջ և այլ գործակալների՝ որպես շահութագործի ենթակաների ինքնանույնականացման հիմնահարցի տեսքով: Սեփականատիրոջ արդյունավետությունը դրսևորվում է այնպիսի ռազմավարական որոշումների ընդունումով, որոնք համապատասխանում են գործարարության նպատակներին և այդ առումով համընկնում դրամազխի արդյունավետության հասկացության հետ: Արդյունավետության, հարաբերական ցուցանիշների աճի ուղղությամբ բաժնետիրության զարգացման տարբերակին բնորոշ է սեփականության առանձնացումը կառավարման գործառույթներից: Սեփականատերը ձգտում է արդյունավետության՝ գործառնական հսկողության գործառույթները տրամադրելով կառավարիչներին, իրեն թողնելով գործարարության ռազմավարական զարգացմանը վերաբերող գործառույթներն ու լիազորությունները: Այդպիսով՝ «բաժնետիրական սեփականության արդյունավետությունը հիմնվում է սեփականատիրոջ և կառավարիչների արհեստավարժայնացման վրա: Այդ մոտեցման դեպքում սեփականատիրոջ աշխատանքի արտադրողականության պաշարն ավելի արդյունավետ է օգտագործվում»²⁷:

Բաժնետիրական սեփականության արդյունավետ զարգացումն իրականացվում է հիմնարկային կառավարման համակարգերի (հաշվետվություն, տնօրենների խորհուրդ, արժեթղթերի թողարկում, ծուլումներ և կլանումներ) և դրանց որակի միջոցով: «Հիմնարկային և մասնավոր ներդրողների հարցումների շարքը, որն անցկացրել է «Մակքենզի» ընկերությունը, բացահայտել է, որ ներդրողների մոտ 80 տոկոսը նշում է հավաքական կառավարման մակարդակի էական նշանակությունը որևէ ընկերության գրավչությունը գնահատելիս: Ընկերությունում հավաքական կառավարման համակարգի առկայությունը մեծացնում է նրա գրավչությունը ներդրողների աչքում»²⁸: Հաշվի առնելով հիմքային բաղադրիչները, որոնք ընդգրկում են հավաքական կառավարման բոլոր կարևոր հարցերը, ձևակերպվել են դրա ընդհանուր սկզբունքները, որոնք որպես հիմք են ընդունվել աշխարհի երկրների մեծ

²⁶ Каячев Г., նշվ. աշխ., էջ 3:

²⁷ Նույն տեղում, էջ 5:

²⁸ Նույն տեղում, էջ 6:

մասում: Ահա դրանք. «1) արդարություն, 2) պատասխանատվություն, 3) թափանցիկություն, 4) հաշվետվություն»²⁹: Ըստ այդմ՝ հավաքական կառավարման համակարգը.

- պաշտպանում է բաժնետերերի իրավունքները և հավասար վերաբերմունք ապահովում բոլոր բաժնետերերի նկատմամբ,
- սահմանում է բոլոր կողմերի պատասխանատվությունը,
- ապահովում է հիմնարկի կարևոր հարցերի վերաբերյալ հավաստի տեղեկությունների ժամանակին բացահայտումը,
- ապահովում է ընկերության ռազմավարական ղեկավարումը, արդյունավետ հսկողություն սահմանում կառավարիչների վրա տնօրենների խորհրդի կողմից, ինչպես նաև տնօրենների խորհրդի հաշվետու լինելը բաժնետերերին:

Խմբակային կառավարման կատարելագործման հիմնական ուղղություններն են բաժնետերերի և կառավարիչների, բաժնետերերի խմբերի միջև տեղեկատվական աններդաշնակության վերացումը կառավարման մարմինների իրավասության, կառավարման մարմինները կազմող անձանց իրավունքների և պարտականությունների համարժեք բաշխման միջոցով, ինչպես նաև համարժեք պատասխանատվության սահմանումը: Կառավարման մեջ բաժնետերերի մասնակցության արդյունավետության էական պայման է հիմնարկային տեղեկատվության մատչելիությունը (տարեկան և եռամսյակային հաշվետվություններ, բաժնետերերի ժողովների նյութեր և այլն): Տեղեկությունների բացահայտման համակարգը դառնում է կարևորագույն օղակ, բաժնետերերի շահերի պաշտպանություն և ներքին հիմնարկային հակասությունների լուծման ձև: «Բաժնետիրական սեփականության արդյունավետության աճի կարևորագույն ուղղությունը վերահսկողության գործառնությունների զարգացումն է: Անկախ բաժնետոմսերի փոշիացման և դրանց կենտրոնացման աստիճանից՝ կառավարելու իրավունքը պատկանում է բաժնետերերին: Անհրաժեշտ են հավանության արժանացնելու լծակների փոփոխություններ՝ հաշվի առնելով բաժնետերերի բոլոր խմբերի շահերը»³⁰:

Բաժնետիրական ընկերությունները լինում են բաց և փակ: Բաց է այն բաժնետիրական ընկերությունը, որի մասնակիցները կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց մյուս բաժնետերերի համաձայնության: Բաց բաժնետիրական ընկերությունը պարտավոր է հրապարակել տարեկան հաշվապահական հաշվետվություններ: «ԲԲԸ-ների առավելությունները ՓԲԸ-ների նկատմամբ, ըստ կարևորության նվազման աստիճանի, կարելի է ներկայացնել հետևյալ գործոնների միջոցով. 1) ձեռնարկության կառավարման ավելի մեծ թափանցիկություն արտասահմանյան ներդրողների և գործընկերների համար, 2) ներուժային ներդրողների ներգրավում և դրամամիջոցային ծառայությունների շուկայի մատչելիություն, 3) բաժնետոմսերի ազատ շրջանառություն, 4) բաժնետիրության կառավարման կառուցվածքի բարելավում»³¹: ՓԲԸ թերություններից են «տնավարի» հարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս հեշտությամբ ՓԲԸ անդամների և ամբողջ ընկերության շահերին հակասող գործեր անելու, այսինքն՝ թույլ տալ չարաշահումներ: Բացի դրանից, ՓԲԸ-ն պարտավոր չէ հրապարակել իր փաստա-

²⁹ Նույն տեղում, էջ 7:

³⁰ Նույն տեղում, էջ 8:

³¹ Акционерные общества, նշվ. աղբյուր, էջ 13:

թղթերը համընդհանուր տեղեկացման համար: Եթե, օրինակ, ՓԲԸ աշխատակիցները չունեն բաժնետոմսեր և չեն մասնակցում ընկերության կառավարմանը, ապա սահմանափակ թվով բաժնետերերը կարող են ընկերությունը տանել դեպի սնանկացում: Այսպես՝ եթե փակ բաժնետիրական օդընկերությունը ղեկավարում է ընդամենը երկու անհատ սեփականատեր, ապա դա հեշտությամբ կարող է իրականություն դառնալ, քանի որ նրանց միջև տարատեսակ հարցերի շուրջ ծագած տարաձայնությունները, այդ թվում՝ ձեռնարկության շահույթի ու բաժնետոմսերից չահաբաժինների ներդրման և օգտագործման չափերի, տեղի, ժամանակի, քանակի և ձևի վերաբերյալ, լուծարման պատճառ կարող են դառնալ:

Այսպիսով՝ ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ներդրումների ներգրավման կատարյալ տարբերակ կարելի է համարել բաց բաժնետիրական ընկերությունների ստեղծումը: Առաջավոր շուկայական տնտեսության մեջ տնտեսական գործունեության մեծագույն մասը բաժին է ընկնում բաժնետիրություններին: Վերջիններիս կարևոր առավելություններից են՝ 1) խոշոր գումարներ կուտակելու հնարավորությունը, 2) կառավարման գործում աշխատակազմին ներգրավելու լծակների առկայությունը, 3) կարևոր որոշումներ կայացնելու համար (ներդրումներ, ռոճիկների չափեր, արտադրական կարողությունների առևտուր, գանձարանի հաստատում) ձայների մեծամասնության անհրաժեշտությունը, 4) բաժնետերերի սահմանափակ պատասխանատվության իրավունքից օգտվելը:

Տնտեսության վերակառուցումը սեփականության ձևերի բազմազանություն է ենթադրում: Քաղաքացիական օդազնացությունում կարող են գործել բոլոր ձևերը, սակայն զարգացած երկրների փորձից հայտնի է, որ խոշոր ձեռնարկությունների՝ իբրև բաժնետիրական ընկերությունների ձևավորումը առավել արդյունավետ է: Օդազնացության բնագավառի միջազգային դրական փորձից հայտնի է, որ առաջադիմող օդընկերությունների մեծ մասը բաց բաժնետիրական է: Այդպիսին են, օրինակ, ռուսական օդային փոխադրումների շուկայի հսկաները՝ Աերոֆլոտ, Տրանսաէրո, Յուտաիր, Սիբիր, Ուրալի օդուղիներ, Օրենբուրգի օդուղիներ:

Տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում հարկավոր է որոշել Հայաստանում պետության, աշխատակազմի, արտասահմանյան և հայրենական սեփականատերերի բաժնետոմսերի քանակների հարաբերակցությունը:

Այսպիսով՝ ՀՀ-ում օդային ձեռնարկությունների ստեղծումը նպատակահարմար է կատարել հավաքական սեփականության տարբերակով: Մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունները առավել արդյունավետ կլինեն փակ բաժնետիրական ընկերությունների կարգավիճակով հավաքական (ժողովրդական) ձեռնարկությունների, իսկ խոշորները բաց բաժնետիրական ընկերությունների ստեղծման դեպքում:

ГЕГАМ ХАЧАТРЯН

*Доцент кафедры эксплуатации и управления
воздушного транспорта АГИУ,
кандидат экономических наук*

Форма собственности как фактор обеспечения конкурентоспособности авиационных предприятий.-

Анализ состояния воздушного транспорта Армении приводит к выводу о необходимости изменений в сфере собственности и управления авиакомпаний. Статья содержит результаты исследования, посвященного решению проблемы поиска наиболее эффективной формы собственности предприятий отрасли воздушных перевозок в экономике Армении. Проанализированы свойства акционерных обществ, рассмотрены в сравнении открытые и закрытые акционерные общества. Методом сравнительного анализа найдена наиболее эффективная форма владения собственностью авиакомпаний. Заключен вывод о том, что самой эффективной организационно-правовой формой авиакомпании является открытое акционерное общество, которое обеспечивает также самые эффективные отношения владения собственностью посредством коллективной формы собственности.

GEGHAM KHACHATRYAN

*Associate Professor at the Chair of Operations
and Management of Air Transport at SEUA,
PhD in Economics*

The Form of Ownership as a Providing Factor of Competitiveness in Aviation Enterprises.-

Analysis of the state air transport in Armenia leads to the conclusion about the necessity of changes in ownership and control spheres of air companies. The article contains the study results on solving the problem of finding the most effective form of enterprises' ownership in the air transport of the Armenian economy. The properties of joint stock companies, have been analyzed and in comparison the open and closed joint stock companies have been considered. By the method of comparative analysis the most effective form of property ownership of air companies has been revealed. It has been concluded that the airline's most effective organizational-legal form is the open joint stock company, which also provides the most effective relationships of property by means of collective ownership.